ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՊ-ՄԱԾՁԲ-15/24

ք.Երևան

« 27» սեպտեմբերի 2024թ.

Հաշվեքննիչ պալատը, ի դեմս գլխավոր քարտուղար Վազգեն Հարությունյանի, որը գործում է Հաշվեքննիչ պալատի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԷԿՈ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 13▯06▯2024թ▯ կնքված ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-10/24-1 ծածկագրով գնման պայմանագրով սահմանված պահանջը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է **2 125 000** (երկու միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է *փաստացի մատուցված ծառայությունների* հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման համար մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայությունն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00061508
Հ/Հ 900011545069

ՖՆ գործառնական վարչություն

---------- ...րությունյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

ԵԿՈ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Դավթաշեն, Հ. Մելքումովի, փ., 88, 0054
ՀՎՀՀ 00233358
Հ/Հ 1570076834420100

---------- Աբրահամյան
(ստորագրություն)

Հավելված N 1
«27» սեպտեմբերի 2024թ. կնքված
ՀՊ-ՄԱԾՀՐ-15/24 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Ծառայության							ՀՀ դրամ
Անվանում	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	բնդհանուր գին	մատուցման		
					հասցեն	ժամկետը	
ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	50111130/2	Հաշվեքննիչ պալատի հաշվեկշռում գտնվող թվով 5 հատ 2024թ. արտադրության BYD Song Plus EV ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ: Տեխնիկական բնութագիրը համաձայն Հավելված 1.1-ի:	դրամ	2,125,000	ք. Երևան, Դավիթ-Բեկի 97/21	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024թ. դեկտեմբերի 20-ը:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00061508
Հ/Հ 900011545069

ՖՆ գործառնական վարչություն

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

ԷԿՈ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Դավթաշեն, Հ. Մելքումովի, փ., 88, 0054
ՀՎՀՀ 00233358
Հ/Հ 157007683442010[illegible]

Ս. Արությունյան

/ստորագրություն/

Հավելված N 1.1
« 27 » սեպտեմբերի 2024թ. կնքված
ՀՊ-ՄԱԾՁԲ-15/24 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

BYD Song Plus EV 2024 մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ցանկ

Հ/Հ	Միջոցառման, աշխատանքի, պահեստամասի և նյութի անվանումը	Չ/Մ	Միավորի գինը (դրամ)	Իրականացման պարբերականությունը
1	Քսանյութերի/յուղի փոխարինում	անգամ	5,000	Յուրաքանչյուր 15.000-20.000կմ. վազքին
2	Էլեկտրականշարժիչի փոխարինում	անգամ	300,000	Ըստ անհրաժեշտության
3	Արգելակային համակարգի ստուգում	անգամ	3,000	Ըստ անհրաժեշտության
4	Արգելակայինկոճղակների փոխարինում	կոմպլ	5,000	Ըստ անհրաժեշտության
6	Արգելակման սկավառակների հղկում	հատ	10,000	Ըստ անհրաժեշտության
7	Զտիչների փոխարինում	հատ	2,000	Ըստ անհրաժեշտության
8	Արգելակման հեղուկի ստուգում	անգամ	5,000	Ըստ անհրաժեշտության
9	Համակարգչայի և ախտորոշում	անգամ	10,000	Ըստ անհրաժեշտության
10	Մեխանիկական ախտորոշում	անգամ	5,000	Ըստ անհրաժեշտության
11	Անվարացքի կարգավորում	անգամ	10,000	Ըստ անհրաժեշտության
12	Անվադողերի փոխարինում	հատ	1,500	Ըստ անհրաժեշտության
13	Անվադողերի հավասարակշռում	հատ	2,000	Ըստ անհրաժեշտության
14	Էլեկտրականդետալների ստուգում	անգամ	10,000	Ըստ անհրաժեշտության
15	Ռեդուկտորիստուգում	անգամ	10,000	Ըստ անհրաժեշտության
16	Հակասառեցման հեղուկի խտության ստուգում	անգամ	5,000	Ըստ անհրաժեշտության
17	Թափքի հղկում,ներկում քմ	հատ	40,000	Ըստ անհրաժեշտության
18	Առջևի արգելակմանկոճղակների փոխարինում	կոմպլ	7,000	Ըստ անհրաժեշտության
19	Առջևի արգելակման սկավառակների փոխարինում	կոմպլ	7,000	Ըստ անհրաժեշտության
20	Հետևի արգելակմանկոճղակների փոխարինում	կոմպլ	7,000	Ըստ անհրաժեշտության
21	Հետևի արգելակման սկավառակների փոխարինում	կոմպլ	7,000	Ըստ անհրաժեշտության
22	Թմբուկային կոճղակների փոխարինում	կոմպլ	10,000	Ըստ անհրաժեշտության
23	Կայունարանի կանգնակների փոխարինում	հատ	11,000	Ըստ անհրաժեշտության
24	Կախոցի փռանների փոխարինում	հատ	10,000	Ըստ անհրաժեշտության
25	Հարվածամեղմիչի փոխարինում	հատ	10,000	Ըստ անհրաժեշտության
26	Թասակի փոխարինում	հատ	10,000	Ըստ անհրաժեշտության
27	Բարձիկների փոխարինում	հատ	11,000	Ըստ անհրաժեշտության
28	Էլ.լարերի փոխարինում,(գլխավոր խուրց)	հատ	40,000	Ըստ անհրաժեշտության
29	Սենսորների փոխարինում	հատ	20,000	Ըստ անհրաժեշտության
30	Ղեկային կառավարմանդետալների փոխարինում	հատ	9,000	Ըստ անհրաժեշտության
31	Վետրավիկների տեղադրում	հատ	2,000	Ըստ անհրաժեշտության

32	Անվակունդի փոխարինում	հատ	10,000	Ըստ անհրաժեշտության
Անհրաժեշտ ապրանքներ, քսանյութեր յուղեր և հավելումներ				
1	Անվադող	հատ	70,000	Ըստ անհրաժեշտության
2	Անվահեծ	հատ	150,000	Ըստ անհրաժեշտության
3	Անիվի գամասեղ	հատ	5,000	Ըստ անհրաժեշտության
4	Անիվի մանեկ	հատ	4,000	Ըստ անհրաժեշտության
5	Յուղերին անհրաժեշտ քսայուղեր	լիտր	15,000	Ըստ անհրաժեշտության
6	Սրահի զտիչ	հատ	19,000	Ըստ անհրաժեշտության
7	Հակասառեցման հեղուկ	լիտր	4,500	Ըստ անհրաժեշտության
8	Ապակիների հեղուկ	լիտր	2,000	Ըստ անհրաժեշտության
9	Արգելակման կոճղակ առջևի	կոմպլ	55,000	Ըստ անհրաժեշտության
10	Արգելակման կոճղակ հետևի	կոմպլ	50,000	Ըստ անհրաժեշտության
11	Արգելակմանսկավառակ արջևի	հատ	50,000	Ըստ անհրաժեշտության
12	Արգելակմանսկավառակ հետևի	հատ	50,000	Ըստ անհրաժեշտության
13	Թմբուկային կոճղակ կոմպլ	կոմպլ	50,000	Ըստ անհրաժեշտության
14	Ապակեմակքրիչ խոզանակ	հատ	7,500	Ըստ անհրաժեշտության
15	Կայունարանի կանգնակ	հատ	20,000	Ըստ անհրաժեշտության
16	Կայունարանի վոան	հատ	5,000	Ըստ անհրաժեշտության
17	Կախոցի վոաններ	հատ	15,000	Ըստ անհրաժեշտության
18	Ղեկային ձգան	հատ	15,000	Ըստ անհրաժեշտության
19	Ղեկային ձգանի ձգաձող	հատ	20,000	Ըստ անհրաժեշտության
20	Գնդի հոդակապ	հատ	20,000	Ըստ անհրաժեշտության
21	Առջևի հարվածամեղմիչ	հատ	100,000	Ըստ անհրաժեշտության
22	Հետևի հարվածամեղմիչ	հատ	80,000	Ըստ անհրաժեշտության
23	Թասակ	հատ	35,000	Ըստ անհրաժեշտության
24	Բարձիկ սրահի	հատ	70,000	Ըստ անհրաժեշտության
25	Անվակունդ	հատ	65,000	Ըստ անհրաժեշտության
26	Խցուկ	հատ	5,000	Ըստ անհրաժեշտության
27	Գորգեր կոմպլեկտ	հատ	20,000	Ըստ անհրաժեշտության
28	Հոդակապ	հատ	150,000	Ըստ անհրաժեշտության
29	Թափարգել	հատ	67,000	Ըստ անհրաժեշտության
30	Առջևի բամպեր	հատ	450,000	Ըստ անհրաժեշտության
31	Հետևի բամպեր	հատ	450,000	Ըստ անհրաժեշտության
32	Առջևի լուսարձակ	հատ	550,000	Ըստ անհրաժեշտության
33	Հետևի լուսարձակ	հատ	500,000	Ըստ անհրաժեշտության
34	Շարժիչի ծածկոց	հատ	300,000	Ըստ անհրաժեշտության
35	Ամրացման դետալներ (Թափքի դետալների, սայլասկա)	հատ	20,000	Ըստ անհրաժեշտության
36	Հետևի փակոց	հատ	350,000	Ըստ անհրաժեշտության
37	Մեղմիչ կապոտի	հատ	150,000	Ըստ անհրաժեշտության
38	Մեղմիչ բեռնախցիկի	հատ	35,000	Ըստ անհրաժեշտության

39	Հողմափակիչ	կոմպլ	35,000	Ըստ անհրաժեշտության
40	Մելավապահ	կոմպլ	45,000	Ըստ անհրաժեշտության
41	Պանորամա ամբողջական	հատ	1,350,000	Ըստ անհրաժեշտության
42	Ամրագոտի	հատ	55,000	Ըստ անհրաժեշտության
ԸՆԴԱՄԵՆԸ ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար				6 103 500

Կատարողը պարտավոր է սպասարկումն ապահովել տվյալ ավտոմեքենան արտադրող ընկերության կողմից արտադրված կամ արտադրողի կողմից երաշխավորված պահեստամասերով և նյութերով: Կատարված աշխատանքների, պահեստամասերի համար Կատարողը տալիս է 6 ամիս երաշխիքային ժամկետ, որի ընթացքում խափանված պահեստամասի փոխարինումը նորով իրականացվում է Կատարողի միջոցների հաշվին: Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Կատարողի գործողությունների կամ անգործության պատճառով տրանսպորտային միջոցին հասցված վնասը Կատարողը պարտավոր է վերացնել իր միջոցների հաշվին:

1. Շահագործման ընթացքում ի հայտ եկած այն անհրաժեշտ պահեստամասերի և ծառայությունների կարիքը, որոնք ներառված չեն տեխնիկական սպասարկման ցանկում, կազմակերպության կողմից, իր միջոցների հաշվին, ապահովվում է որպես երաշխիքային սպասարկում՝ բացառությամբ ԱՊՊԱ, ԿԱՍԿՈ ապահովագրական դեպքերի հետևանքով անհրաժեշտ ծառայությունների:

2. Կատարողը սպասարկման ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենաների ծրագրային թարմացումները արտադրողի կողմից նախատեսված բոլոր հանգույցների համար, արտադրողի լիցենզիոն ծրագրերով՝ դրանց թողարկմանը համապատասխան, նախորոք ներկայացնելով թարմացմամբ կատարվող փոփոխությունների նկարագիրը:

3. **Երաշխիքային և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ժամկետները.**

Կատարողը Պատվիրատուի ներկայացուցչի կողմից ներկայացված սպասարկման անհրաժեշտության վերաբերյալ ծանուցմանը հաջորդող առավելագույնը մեկ աշխատանքային օրվա համար նշանակում է այցելություն ժամը 9.00-ից մինչև 17.00-ն 4 ժամվա միջակայքում ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ներկայացնելու հնարավորությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվանից հաշված.

ա) նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ սպասարկողի պահեստում կամ այլ մատակարարների պահեստներում պահեստամասի առկայության դեպքում: Պահեստամասի փոխարինման ծառայությունների անհրաժեշտության առաջացման դեպքերում, պահեստամասի բացակայությամբ կամ այլ հանգամանքներով պայմանավորված, երբ համապատասխան ծառայությունների մատուցման ժամկետը հնարավոր է, որ գերազանցի կամ գերազանցել է 10 աշխատանքային օրը, ապա մինչև համապատասխան ծառայությունների մատուցումն ու ավտոմեքենան Պատվիրատուին վերադարձնելը՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պահանջով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել համարժեք այլ ավտոմեքենա:

բ) առավելագույնը 8 աշխատանքային օրվա ընթացքում՝ թափքի հղկման և ներկման, հիմնական հանգույցների (շարժիչ, ռեդուկտոր և այլն) վերանորոգման/փոփոխման դեպքում: Նշված ծառայությունների անհրաժեշտության առաջացման այն դեպքերում, երբ Կատարողի հիմնավորված պատճառաբանությամբ համապատասխան ծառայությունների մատուցման ժամկետը հնարավոր է, որ գերազանցի կամ գերազանցել է 10 աշխատանքային օրը, ապա մինչև համապատասխան ծառայությունների մատուցումն ու ավտոմեքենան Պատվիրատուին վերադարձնելը՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պահանջով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել համարժեք այլ ավտոմեքենա:

Առանձին դեպքերում Կատարողի հիմնավորված պատճառաբանությամբ՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պատվիրատուի կողմից կարող է սահմանվել աշխատանքների կատարման այլ ժամկետ, բայց ոչ ավել քան 10 աշխատանքային օրը:

4. Երաշխիքային և տեխնիկական սպասարկման կայանին ներկայացվող պարտադիր պահանջներ

Տեխնիկական, ինչպես նաև երաշխիքային սպասարկումն իրականացվելու է Վաճառողի ԷԿՈ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ Սերվիս կայանում՝ ք. Երևան, Դավիթ-Բեկի 97/21 հասցեում (այսուհետ՝ Տեխսպասարկման կայան), որը գտնվում է Երևան քաղաքում՝ քաղաքային տրանսպորտի կանգառին հասանելի տարածքում և բավարարում է հետևյալ պահանջներին.

ա/ պետք է կահավորված լինի առնվազն չորս էլ.ամբարձիչներով (домкрат), առնվազն 3,5 տոննա բարձրացնելու հնարավորությամբ,

բ/ հնարավորություն ունենա ապահովելու պայմանագրային բոլոր ծառայությունների մատուցումը տվյալ կայանում, ունի վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը

գ/ ապահովված լինի ավտոմեքենաների կայանման (պահպանման) համար նախատեսված վայրով, շուրջօրյա (24 ժամ) տեսահսկման և պահակային հսկողությամբ,

դ/ ունենա առանձին, կահավորված սպասասրահ և հաճախորդների համար առանձին սանհանգույց,

ե/ ապահովի նվազագույնը 3,0 տոննա բեռնատարողությամբ ավտոքարշակով, որը պահանջի դեպքում

- Երևան քաղաքի վարչական տարածքում 2 ժամվա ընթացքում, պետք է հասնի խափանված ավտոմեքենայի գտնվելու վայրը և անվճար տեղափոխի վերանորոգման կայան
- Երևան քաղաքի վարչական տարածքից դուրս՝ առնվազն 5 ժամվա (կախված հեռավորությունից) ընթացքում, պետք է հասնի խափանված ավտոմեքենայի գտնվելու վայրը և տեղափոխի վերանորոգման կայան: Ընդ որում տեղափոխման արժեքը չի կարող գերազանցել 1 կմ-ի համար 500 դրամը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00061508
Հ/Հ 900011545069

ՖՆ գործառնական վարչություն

---------------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

ԷԿՈ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Դավթաշեն, Հ. Մելքումովի, փ., 88, 0054
ՀՎՀՀ 00233358
Հ/Հ 1570076634420100

---------------- Ա. Աբրահամյան
/ստորագրություն/

Հավելված N 1.1
« 27» սեպտեմբերի 2024թ. կնքված
ՀՊ ՄԱԾՁԲ-15/24 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության															ՀՀ դրամ
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/2	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ									2,125,000	2,125,000	2,125,000	2,125,000	2,125,000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00061508
Հ/Հ 900011545069

Պետական կառավարչական հիմնարկ / ... պետական ոչ առևտրային ... (սկզբնամասը ծածկված է կնիքով) ...րծառնական վարչություն

------------------- Վ.Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԷԿՈ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Դավթաշեն, Հ. Մելքումովի, փ., 88, 0054
ՀՎՀՀ 00233358
Հ/Հ 1570076834420100

Ա. Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«27» սեպտեմբերի 2024թ. կնքված
ՀՊ-ՄԱԾՁԲ-15/24 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանում	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1

«27» սեպտեմբերի 2024թ. կնքված
ՀՊ-ՄԱԾՁԲ-15/24 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն